Գերյարգելոյ Աբբայ Մխիթարի բաղձալոյ Հօրդ իմոյ
ի տէր բազմաւ սիրով հանդերձ ողջոյն

Առաջին գիրն գերյարգելութեանդ, զոր յղեցեր ի ձեռն մաճառցի քահանային, եհաս առ մեզ հազիւ ի 12 ամսոյս փետրվարի։ Իսկ և յետ երեք չորս աւուրց ժամանեաց ևս միւսն, զոր գրեալ էիր ի 11 փետր.։ Եւ արդ առ երկոսինն ի միասին պարտ է ինձ այժմ այսու պատասխանել։ Բայց նախ ծանուցանեմ գերյարգելութեանդ զայս, թէ եղեալ անջատութիւնն և տարակացութիւնն մեր յիրերաց ոչ թէ եբարց, այլ ոչ ևս նուազեցոյց զսէրն և զմիաբանութիւնն, որ վերակերտեցաւ ի յանդրադարձականաց ճանաչմանց սրտից իրերաց սիրով զգածեցելոց՝ մինչ ներկայք էիք մեզ. նա՝ ևս առաւել հաստատի օր ըստ օրէ սակս կարօտութեանս ջերմագունի վերստին տեսանելոյ զպատուականութիւն ձեր։ Եւ զի վկայ է տէրն բանիս այսորիկ, զի յետ որ փորձեալ ճաշակեցաք զքաղցրութիւն ձեր, և այժմ վրիպեցեալք եմք ի ներկայութենէ ձերմէ, թուի մեզ թէ կորուսեալ եմք զամենայն մխիթարութիւն. մինչ մանաւանդ զոչ ոք ունիմք աստէն ձեզ համանման։ Ուստի և բազմիցս ձանձրացեալ մեր ի զգուելի բնութեանց կամ կենցաղավարութեանցն յոգունց մարդկանց, սովորք եմ ասել զայս, թէ չիկա՛ աստէն այլ մարդ մի նման աբբայ Մխիթարին, և աշակերտացն նորին. ո՜հ զի կորուսաք զարս այնպիսիս! և այլ. և զի ոչ կարեմ զբանս զայսոսիկ ընդ երկար և պայծառագոյն ճառել, վասն որոյ և ինձ սոյնս լռել պարտ է. մինչ մանաւանդ սրամտութիւն քո՝ խորագէտ բարուոք ըմբռնէ զայս ամենայն ինչ։ Ապա յետ այսորիկ չնորհակալ եմ զի արժանի համարեցեր ծանուցանել ինձ զփափագեցեալ բացորոշումն որ յաղագս ժամոյն հայոց. քանզի արդարև ո՜չ յայլմէ ումեքէ զայս իմանալոց էի, եթէ ոչ ի գերյարգելութենէդ, մինչ ոչ գիտէի ում հարցանել զիրէ այսպիսւոյ։ Նա՛ ևս իբրու յուսահատեալ էի թէ յառաջանայցէ, և կամ թէ ելանիցէ այսպիսի օգտակար, համեմատ բացորոշումն. գոհութիւն Քրիստոսի, որ վասն սուրբ արդեանց և քրտանց քոց, թոյլ ոչ ետ գնալ ընդ վայր և փճանալ. կամ ամենեին զոլ անարդիւնաւոր սակաւագոյն աշխատանքս։...

Իսկ արդ ամենեքին որք աստէն ճանաչեալ են զքեզ, և որոց անդէն առաքեալ ես զգիրս, միշտ յիշատակեն զքեզ, և մեծարեալ զովեն զամենադրուատելի, և հէրոիքական գործս գերյարգելութեանդ։...

Գերյարգելութեան քամ

Թուին Քրիստոսի 1719 փետր. 18
ի Հռոմ

Նուաստ և ջերմեռանդ
ծառայ Ստեփաննոս

ԺԷ·

Ամենափայլուն ապացոյց մ՝է անկեղծ ու մտերիմ բարեկամութեան, զոր ցոյց կու տայ Ուրբանեան վարժարանի ամենապայծառ հայ դէմքը Խաչատուր Վ. Էրզրումեցի՝ առ իւր սրտակից փարելին Մխիթար։ Նա իւր վերջին կամքին գործադիր, ու միանգամայն (բացի քանի մը կէտերէ) գլխաւոր ժառանգորդ կը կարգէ «Մխիթար Աբբահայրն, կամ զնորա զո՛ որ և իցէ յաջորդսն, որ զկնի մահուան գտանիցի կենդանի». յետին անգա՛մ մ՝ալ կարծես գաղափարակից ու պաշտպան կանգնելով Մեծ Աբբային հեռատես ու գեղեցիկ դիտաւորութեանց ու ծրագիրներուն, որոնց դիւրացման մասին այնքան աջակցութիւն ընծայած էր իւր կենդանութեանը։

Կտակին սկիզբը՝ յետ անուան՝ պարապ թողուած է. յայտնի է՝ Հաւատոյ դաւանութեան յատկացուած։

Ապա կը սկսի անմիջապէս մի առ մի նշանակել իր արտայայտութիւնները։